ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ներքին Շենգավիթի 12-րդ փողոցն անվանակոչել կինոյի, հեռուստատեսության և թատրոնի դերասան Արմեն Խոստիկյանի անվամբ՝ «Արմեն Խոստիկյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂԱԼԵՉՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արմեն Խոստիկյանը ծնվել է 1929թ.-ի մայիսի 22-ին Երևանում: Ավարտել է Երևանի թիվ 30 միջնակարգ դպրոցը, ապա ընդունվել բժշկական ինստիտուտ, սակայն մեկ տարի անց հրաժարվել է բժշկի մասնագիտությունից: 1947-51թթ սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետում՝ Արմեն Գուլակյանի արվեստանոցում: Ուսանողական տարիներին խաղացել է մի շարք ներկայացումներում՝ Գ.Սունդուկյանի «Քանդած օջախ» (Փարսիդ), Ա.Աֆինոգենովի «Մաշենկա» (Տումանսկի), Վ.Շեքսպիրի «Վերոնայի երկու ազնվականները» (Լաունս) և այլն: 1951թ-ից աշխատել է Երևանի Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, ուր մինչև 1990-ականները ստեղծել է մեծ ու փոքր բազմաթիվ դերեր: Եղել է լուրջ կատակերգակ դերասան: Խաղացած ներկայացումներից են՝ Ա.Շիրվանզադեի «Նամուս» (Սերգեյ բեկ), «Քաոս» (Ալեքսեյ Իվանովիչ), Գ.Տեր-Գրիգորյանի «Հաջի Փայլակ» (Հարութ Անվերջ), Ֆ.Դոստոևսկու «Ապուշը» (Ֆերդիշչենկո), Սարդուի և Մորոյի «Մադամ Սան-Ժեն» (Ֆուշե), Է.դե Ֆիլիպպոյի «Շաբաթ, կիրակի, երկուշաբթի» (Աթիլիո), Ա.Օստրովսկու «Կատաղի փողեր» (Տելյատև), Կ.Կրապիվայի «Կոնդրատի կինը ուղեծիրում» (Տեսակով), Վ.Շկվարկինի «Ուրիշի երեխան» (Սեմյոն Պերչատկին) և այլն: 1990-ականներին դերասանական փոքրիկ խումբ է կազմել և ներկայացումներով հանդես եկել մայրաքաղաքում ու նրա սահմաններից դուրս: Իր մասնակցությունն է բերել նաև մանուկների համար կազմակերպվող ներկայացումներին: Նրա գրած «Աբելիկի արկածները» պիեսը 1981թ. բեմադրվել է Երևանի Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում: Նկարահանվել է նաև հեռուստաթատրոնում և ֆիլմերում՝«Ոսկե ցլիկ» (1955թ.), «Մոր սիրտը» (1957թ.), «Նվագախմբի տղաները» (1960թ.), «Տերն ու ծառան» (1962թ.), «Շրթներկ համար 4» (1964թ.), «Մսյո Ժակը և ուրիշները» (1966թ.), «Մեր քաղաքի մարդիկ» (1966թ.), «Համագյուղացիներ» (1974թ.), «Մեր բակը» (1996թ.), «Հարսնացուն Ջերմուկից» (1997թ.), «Մեր բակը 2» (1998թ.) և այլն: Ամանորյա հեռուստածրագրերի ամենասիրված հերոսներից է եղել ավելի քան երկու

տասնամյակ: 1987թ. ստեղծել է թատերական «Փյունիկ» ստուդիան: 1984թ. արժանացել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման: 2000թ. պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով: Մահացել է Երևանում2003թ.-ի հուլիսի 22-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂԱԼԵՉՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Արմեն Խոստիկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Արմեն Խոստիկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ԶԱՐՈՒՀԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂԱԼԵՉՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ